ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51, 18.06.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Ի Սի Էներջի» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» գնանշման հարցում

Գնման առարկան՝ ապրանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.06.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացի 4/14
հեռ: (+374) 55 750-057
էլ.փոստ՝ info@ecenergy.am

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով
հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- **Բողոքի նախապատմությունը և փաստերը**

✓ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

✓ Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն:

✓ Ընթացակարգի հրավերի Հավելված 1՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, 5-րդ չափաբաժնի համար որպես ապրանքի անվանում նշվել է հետևյալը՝«Ռելսեր P50 **տիպի**»:

✓ Ընկերությունը «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է)՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
5	Ռելսեր P50	154 600 000 (Մեկ հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր հազար)	30 920 000 (Երեսուն միլիոն ինը հարյուր քսան հազար)	185 520 000 (Մեկ հարյուր ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար)

✓ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. թիվ 2 արձանագրության (կցվում է) 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն **Հավելված 2-ով ներկայացրած գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկաներին:**

✓ Նույն արձանագրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը:

- **<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները</u>**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:***

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն զրկվել է **իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:**

Մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի Հավելված 1՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, 5-րդ չափաբաժնի համար որպես ապրանքի անվանում նշվել է հետևյալը՝«Ռելսեր P50 տիպի»:

Ընկերությունը «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
5	Ռելսեր P50	154 600 000 (Մեկ հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր հազար)	30 920 000 (Երեսուն միլիոն ինը հարյուր քսան հազար)	185 520 000 (Մեկ հարյուր ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար)

Արդյունքում, «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն Հավելված 2-ով ներկայացրած գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկաներին:

Այսինքն, ուսումնասիրելով Ընկերության հայտով ներկայացրած գնային առաջարկը, ակնհայտ է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն, քանի որ գնային առաջարկում որպես առարկայի անվանում նշվել է «Ռելսեր P50» և ընդամենը չի նշվել «տիպի»-ի բառը, ինչը հիմք է հանդիսացել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրականացնելով ձևական վարչարարություն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ բողոքներ քննող անձ,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ **նախքան պայմանագրի կնքումը** բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է **պայմանագիր կնքելու որոշումը**, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, **քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 50-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համադրմամբ պարզ է դառնում, որ անգործության ժամկետի ավարտից հետո, **սակայն նախքան պայմանագրի կնքումը, մասնակիցը իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի որոշումը:**

Միևնույն ժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը արգելում է կնքել պայմանագիր անոգործության ժամկետի օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

Ներկայացված բողոքով խնդրել ենք դադարեցնել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ տվյալ ընթացակարգով լրացել է անգործության ժամկետը, սակայն սույն բողոքը ներկայացնելու օրվա (18.06.2021թ.) դրությամբ դեռևս առկա չէ կնքված պայմանագիր, առավել ևս, կնքված պայմանագիր առկա չի կարող լինել, քանի որ չի լրացել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը, որի ընթացքում դեռևս արգելվում է կնքել պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից բողոքներ քննող անձին խնդրում ենք «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ընդունել վարույթ և չզրկել ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքից:

Կից ներկայացվում է՝

1. Պետական տուրքի վճարման անդորրագիրը:
2. «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի տնօրեն Դ.Հակոբյանի անձը հաստատող փաստաթղթի պատճեն:
3. «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի պետական ռեգիստրի վկայականի պատճեն:
4. ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության պատճեն:
5. «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը:

Հարգանքով՝

«Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ –ի տնօրեն _____ Դավիթ Հակոբյան

«Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ»
"И СИ ЭНЕРДЖИ"
"EC ENERGY"
01020365

18.06.2021թ.